ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԱՅՔԻ ԲԱԺԻՆ

3801, ք. Վայք, Երիտասարդական փ. 2 — ֆաքս. 010-59-06-37, /0282/9-28-02

N 82/ 436 — «06» 05 2025թ.

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
**Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Մաթևոսյան**

Ուղարկվում է Երևան-Մեղրի ավտոճանապարհի 145.6 կմ հատվածում գտնվող ,,Թագուհին Ձորի,, չգործող ռեստորանային համալիրի տարածքում առանց համապատասխան փաստաթղթերի շինարարական աշխատանքներ կատարելու փաստի վերաբերյալ կազմված փաստաթղթերը՝ Ձեր կողմից հետագա ընթացքը որոշելու համար:

Արդյունքների մասին խնդրվում է հայտնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Վայքի բաժին:

Առդիր՝ ,, 4 ,, թերթ:

24/...

**Հարգանքով՝**

**ՊԵՏ,**
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝** **Գ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատ. ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Վայքի բաժնի ավագ համայնքային ոստիկան, ոստիկանության մայոր՝ Ս.Մանուկյան

Հեռ. 093260995

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳՎ ՎԱՅՔԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

# ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Զեկուցում եմ Ձեզ, որ իրավախախտումների հայտնաբերման և կանխման ուղղությ... 2025թ. մայիսի 6-ին իմ կողմից իրականացված սպուգայց-շրջագայությունների ընթացքու... Երևան-Մեղրի ավտոճանապարհի 145.6 կմ հատվածում գտնվող ,,Թագուհին Ձորի,, չգործող ռեստորանային համալիրի տարածքում հայտնաբերվել է առանց համապատասխան փաստաթղթերի շինարարական աշխատանքների կատարման փաստ, այսինքն առերևույթ առկա է ,,Վարչական իրավախախտումների վերաբերյալ,, ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված իրավախախտում:

,,Վարչական իրավախախտումների վերաբերյալ,, ՀՀ օրենսգրքի 219.1-րդ հոդվածի համաձայն նույն օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման գործերը քննում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Զեկուցելով վերոգրյալը՝ խնդրվում է Ձեր թույլտվությունը նշված փաստի վերաբերյալ կազմված փաստաթղթերն ուղարկել Վայքի համայնքապետարան՝ հետագա ընթաց... որոշելու համար:

ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳՎ ՎԱՅՔԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ՝ Ս.ՄԱՆՈՒԿՅԱՆ

06.05.2025թ.

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳՎ
ՎԱՅՔԻ ԲԱԺՆԻ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԵՊՔԵՐԻ
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
№171 «06» 05 2025թ.





